ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
11 դեկտեմբերի, 2020

Պարենի անվտանգության համակարգը Հայաստանում. քաղաքականությունը տարիների ընթացքում, շուկայի ֆունկցիոնալությունը, մատակարարման շղթաները*

Գագիկ Մակարյան, տեխնիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի Գործատուների հանրապետական միության նախագահ

Ծուշանիկ Մակարյան, սոցիոլոգ, գիտությունների թեկնածու

Մինչև 2010-ականների կեսերը Հայաստանի պարենի անվտանգության քաղաքականությունը մեծապես կապված էր աղքատության հետ: Քաղաքականության շատ դրույթներ վերաբերում էին աղքատներին սոցիալական աջակցություն ցուցաբերելուն: Այս շեշտադրումը հիմնականում պայմանավորված էր երկրում աղքատության մեծ մասնաբաժնով, որը 1996թ.-ին կազմում էր բնակչության 47.7% (ՀՀ կառավարություն 1997), իսկ 2019թ.՝ բնակչության 26.4% (ԱՐՄՍՏԱՏ 2020բ):

Երբ Հայաստանը մշակեց աղքատության հաղթահարման տարբեր ռազմավարություններ, աստիճանաբար պարենի անվտանգության քաղաքականությունը փոխեց շեշտադրումը և կենտրոնացավ «կենսական նշանակության սննդամթերքի ինքնաբավության» և «սննդամթերքի անկախության» վրա, որոնք պետք է ձեռք բերվեին տեղական գյուղատնտեսական արտադրությունը խթանելու միջոցով:

2016 թվականից ի վեր Հայաստանում գյուղատնտեսության զարգացման քաղաքականությունն ու պարենային անվտանգությունը դարձել են ամուր փոխկապակցված, և գյուղատնտեսության զարգացումը համարվում է Հայաստանի պարենային անվտանգության և սննդամթերքի ինքնաբավության հիմնաքար:

Այնուամենայնիվ, վերջին 20 տարիների ընթացքում պարենի անվտանգության տարբեր քաղաքականությունների իրականացումը բազմաթիվ բացեր ուներ: Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական ռիսկերի և կարողությունների ոչ լիարժեք վերլուծությունը և փաստերի վրա հիմնված գնահատումների բացակայությունը տարիների ընթացքում հնարավորություն չստեղծեցին կառավարության համար պարենի անվտանգության ոլորտում համապատասխան շահագրգիռ կողմերի հետ համագործակցելու համար: Ընդունված օրենքները ուշադիր չէին մշակվում և վերանայվում: Գործնական տեսակետից սա երկրում բացահայտեց պարենի անապահովությունը, և ժամանակ առ ժամանակ տարբեր ապրանքատեսակներ շուկայում դեֆիցիտի էին ենթարկվում: Քաղաքականության տեսակետից դա հանգեցրեց անորոշ և անիրատես սննդի անվտանգության քաղաքականության նպատակների, հնացած օրենսդրության և տարիների ընթացքում քաղաքականության անհամապատասխան իրականացման:
Օրինակ՝ **2002 թ.-ի «Պարենային անվտանգության ապահովման մասին»** և **2004թ.–ի «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին»** օրենքները հնացել են, և քաղաքականություն որոշ մշակողներ ու փորձագետներ դրանք նկարագրում են որպես **«մեռած օրենքներ»**: Քաղաքականությունն իրականացնողներն այլևս չեն հետևում **Հայաստանում պարենի անվտանգության ապահովման 2011թ.-ի քաղաքականության հայեցակարգին** (պարենի անվտանգության վերաբերյալ ամենավերջին քաղաքականության հայեցակարգը), բայց իներցիայով դրա 2017-2021թթ. գործողությունների ծրագիրը շարունակում է

* Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Գագիկ Մակարյանին հետևյալ էլ. փոստի հասցեով՝ makaryan.ruea@gmail.com:

իրագործվել, որքան էլ անիմաստ դա թվա: Շուտով մշակվելու է պարենի անվտանգության նոր քաղաքականության հայեցակարգ:
Վերջին 20 տարում Հայաստանի պարենի անվտանգության քաղաքականության մեջ գերակշռող անհամապատասխանության արդյունքում, այսօր, Հայաստանը՝ երբեմնի ամենաբարեկեցիկ Խորհրդային միության հանրապետություններից մեկը, իր «Պարենի անվտանգության գլոբալ ինդեքսով» («Economist Intelligence Unit 2020»), աշխարհում միայն 76-րդն է: Այս ցուցանիշի բաղադրիչներից մեկով՝ սննդի որակ և անվտանգություն, Հայաստանը հետ է մնում աֆրիկյան շատ աղքատ երկրներից, ինչպիսիք են Ռուանդան, ոչ սննդարար դիետայի պատճառով. հայերն ավելի քիչ բանջարեղեն և միրգ են օգտագործում, քան առաջարկվում է առողջ սննդակարգի համար և փոխարենը օգտագործում են շատ հաց, թխած ապրանքներ, մակարոնեղեն, ձու և կարտոֆիլ, որոնք անառողջ դիետիկ սովորություններ են (Պարենի համաշխարհային ծրագիր, WFP 2019):

Աղյուսակ 1. Պարենի անվտանգության գլոբալ ինդեքս (GFSI) ըստ սննդամթերքի մատչելիության, հասանելիության, որակի և անվտանգության, ըստ երկրների, 2019թ.

Աշխարհում զբաղեցրած դիրքը	Երկիր	Ընդհանուր ինդեքս	Մատչելիու-թյան ինդեքս	Հասանելիու-թյան ինդեքս	Որակի և անվտանգու-թյան ինդեքս
1	Սինգապուր	87.4	95.4	83.0	79.4
2	Իռլանդիա	84.0	90.5	76.8	87.7
3	ԱՄՆ	83.7	87.4	78.3	89.1
35	Չինաստան	71.0	74.8	66.9	72.6
36	Բելառուս	70.9	76.0	62.9	80.2
41	Թուրքիա	69.8	74.7	64.8	71.1
42	Ռուսաստան	69.7	79.8	60.1	70.9
48	Ղազախստան	67.3	77.5	57.7	68.3
53	Ադրբեջան	64.8	75.3	59.2	54.0
71	Ուզբեկստան	59.0	65.6	55.1	53.4
76	Ուկրաինա	57.1	63.9	50.0	59.6
76	Հայաստան*	57.1	51.7	66.2	45.4
77	Մյանմար	57.0	59.1	57.2	51.3
78	Պակիստան	56.8	63.2	55.7	43.6
79	Նեպալ	56.4	58.5	55.4	53.7
80	Մալի	54.4	45.9	60.1	59.9
81	Սենեգալ	54.3	51.6	56.1	56.1
82	Նիկարագուա	54.2	63.5	47.9	48.2
83	Բանգլադեշ	53.2	60.4	54.8	30.6
84	Կոտ դ'Իվուար	52.3	53.5	58.1	33.1
85	Բենին	51.0	48.6	54.9	46.4
86	Քենյա	50.7	56.7	48.0	43.2
87	Բուրկինա Ֆասո	50.1	47.0	55.9	41.6
88	Կամերուն	49.9	53.7	47.6	47.0
89	Նիգեր	49.6	50.2	53.6	37.4
90	Կամբոջա	49.4	56.7	48.1	34.6
91	Եթովպիա	49.2	49.7	52.6	39
92	Լաոս	49.1	55.5	47.6	37.4
93	Տաջիկստան	49.0	58.8	41.1	46.6
94	Նիգերիա	48.4	50.4	45.8	50.7

95	**Ռուանդա**	48.2	43.8	52.0	48.5
96	**Տանզանիա**	47.6	45.1	50.4	45.9
97	**Գվինեա**	46.7	47.4	52.4	29.0
98	**Ուգանդա**	46.2	45.8	45.5	49.1
99	**Սուդան**	45.7	47.1	44.4	46.0
100	**Անգոլա**	45.5	51.3	40.5	44.9
101	**Զամբիա**	44.4	41.8	50.7	33.6
102	**Տոգո**	44.0	45.6	47.2	31.0
103	**Հաիթի**	43.3	50.3	39.6	35.9
104	**Մալավի**	42.5	39.4	48.6	33.1
105	**Մոզամբիկ**	41.4	42.5	47.9	20.6
106	**Սիերա Լեոնե**	39.0	40.8	40.3	30.6
107	**Սիրիա**	38.4	34.6	38.9	46.4
108	**Մադագասկար**	37.9	35.7	45.7	22.1
109	**Չադ**	36.9	40.3	34.9	33.5
110	**Կոնգո (Դեմ. Հանր.)**	35.7	37.3	40.0	19.8
111	**Եմեն**	35.6	45.5	28.6	30.2
112	**Բուրունդի**	34.3	36.6	32.2	34.5
113	**Վենեսուելա**	31.2	15.8	32.2	66.9

Աղբյուր: Economist Intelligence Unit (2020), ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (2020):
* Հայաստանի՝ Պարենի անվտանգության գլոբալ ինդեքսի (GFSI) հաշվարկը կատարվել է 2019 թվականին, սակայն տվյալներն ու հաշվետվությունը դեռ չեն հրապարակվել GFSI-ի հանրային տվյալների բազայում: Հասանելի են միայն Հայաստանի GFSI ինդեքսի ցուցանիշները, որոնք տեղակայված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում (2020) https://www.mineconomy.am/page/1333:

Պարենի անվտանգության գլոբալ ինդեքսը մատչելիությունը սահմանում է որպես «սպառողների կողմից սննդամթերք ձեռք բերելու հնարավորություն, գների ցնցումների նկատմամբ նրանց խոցելիություն և ցնցումների առաջացմանը սպառողներին աջակցելու ծրագրերի և քաղաքականության առկայություն»: Հասանելիությունը վերաբերում է «մատակարարման խափանման ռիսկին, սննդամթերք տարածելու կարողությանը և գյուղատնտեսական արտադրանքի ընդլայնման հետազոտական ջանքերին»: Որակը և անվտանգությունը նկարագրում են «միջին դիետայի բազմազանությունն ու սննդարարությունը, ինչպես նաև սննդի անվտանգությունը» (Economist Intelligence Unit 2020):

Ի՞նչու պարենի անվտանգությունը և գյուղատնտեսությունը փոխկապակցելը բավարար չէ

Այսօր Հայաստանը շարունակում է պարենի անվտանգության այն ձևակերպումը, որը հաստատվել է 15 տարի առաջ և ըստ որի որպես սննդի քաղաքաքականության նպատակ **պարենային անվտանգությունը կախված է կենսական նշանակության պարենի ապրանքների տեղական արտադրության ինքնաբավարարման ձեռքբերումից**, ինչը, իր հերթին պետք է հանգեցնի Հայաստանի **պարենի անկախությանը:** Այս ձևակերպմամբ պարենի անվտանգությունը գյուղատնտեսության մի մասն է:

Այս հայեցակարգի շրջանակներում գյուղատնտեսության շատ խնդիրներ կապված են պարենի անվտանգության զարգացման հետ: Նույնիսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կայքում պարենի անվտանգությունը նշված է գյուղատնտեսության տակ, https://www.mineconomy.am/en/page/1333:

Հայաստանի գյուղատնտեսությունն ունի ցածր շահութաբերություն և արտադրանքի բարձր ինքնարժեք: Պատճառները շատ են և փոխկապակցված.

Հայաստանի գյուղատնտեսությունը շատ խոցելի է բնական աղետներից (կարկուտ, երաշտ, ցրտահարություն, սողանքներ, ջրհեղեղներ և այլն): Բացակայում են ռիսկերի մոնիտորինգը և կառավարումը՝ հողի և եղանակի պայմանները մշտադիտարկելու, կարկտից պաշտպանական ենթակառուցվածքներ ունենալու, կլիմային դիմացկուն կամ կլիմային համարժեք ցանքատարածություններ մշակելու կամ բնական աղետներից և ռիսկերից ապահովագրում ապահովելու համար: Տեխնոլոգիաները և մեքենաները հնացած են, որը դանդաղեցնում է արտադրությունը: Հողատարածքները փոքր են և մասնատված, ինչը դժվարացնում է հողն արագ մշակելը և ոռոգման համակարգերի ստեղծումը: Շատ վարելահողեր ընդհանրապես չեն մշակվում, չնայած պատկանում են ֆերմերներին և գյուղացիներին: Ջրի և ոռոգման պակասը նույնպես լուրջ խնդիրներ են: Ֆերմերներն ունեն ցածր հմտություններ և քիչ գիտելիքներ գյուղատնտեսական նոր և նորարարական մեթոդների վերաբերյալ: Նրանք օգտագործում են ցածրորակ սերմեր, կասկածելի պարարտանյութեր, չունեն պատշաճ բնապահպանական ռիսկերի կառավարման սարքավորումներ և գիտելիքներ: Ռիսկերը շատ են: Այսպիսով, **ֆերմերների համար գյուղատնտեսությունը դարձել է անկանխատեսելի և անշահավետ**:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացրել (շատերը՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ) **տեղական գյուղատնտեսական արտադրությունը խթանելու** և ֆերմերներին աջակցելու համար, օր.՝ սերմացուի և այլ մեխանիզմների տրամադրումը (վարկեր, հարկերի իջեցում և այլն), կամ տեղական ձեռնարկություններին սուբսիդիաներ տրամադրելու միջոցով շահագրգռելը տեղական ֆերմերներից և գյուղացիներից ապրանք/հումք գնել, այլ ոչ թե ներկրել: Սա հատկապես կարևոր է, քանի որ հումք ներմուծելը հաճախ ավելի շահավետ է և էժան, քան դրանք Հայաստանում տեղում արտադրելը:

Վերջին 2-3 տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումները դարձել են ավելի իրատեսական, ավելի ինտեգրված և նպատակային: Հատկապես **«Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը» ուժեղ քաղաքականության փաստաթուղթ է**: Սա դրական տեղաշարժ է Հայաստանի գյուղատնտեսական քաղաքականության համար, որը տասնամյակներ շարունակ անգործության էր մատնված՝ 1991թ.-ին Հայաստանի անկախացումից ի վեր:

Բայց սա բավարար չէ:

Գյուղատնտեսության և պարենի անվտանգության ոլորտում կիրառվող քաղաքականությունների կապը ենթադրում է, որ **եթե գյուղատնտեսությունը զարգանա, ապա կզարգանա նաև պարենի անվտանգությունը: Իսկ եթե գյուղատնտեսությունը չզարգանա, ապա պարենի անվտանգությու՞նը...:**

Շուկայի ֆունկցիոնալությունը և մատակարարման շղթան Հայաստանում

Երբ COVID-19 համաճարակը սկսվեց, շատ արևմտյան զարգացած արպետություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը կամ Մեծ Բրիտանիան, սննդի լուրջ պակասորդներ ր մատակարարման ընդհատումներ ունեցան (CNN 2020, BBC News 2020):

Ի հակադրություն դրան, Համաշխարհային պարենի ծրագրի և Հայաստանի Գործատուների հանրապետական միության կողմից վերջերս Հայաստանում արված հետազոտության արդյունքում պարզվեց, որ 2020 թ-ի գարնան և ամռան ամիսներին խանութները սննդամթերքի մեծ պակաս չեն ունեցել և գրեթե բոլոր կենսական նշանակության ապրանքների մատակարարումը կայուն է եղել, բացառությամբ որոշ յուղերի և շաքարի մատակարարման կարճատև ուշացումների: Հայաստանում առևտրակետերը պնդում են, որ ապրանքների մատակարարները շատ են: Իսկապես, Հայաստանի խանութներում կա և՛ պարենային և՛ ոչ-պարենային առաջնային ապրանքների հավասարակշռված և մեծ հասանելիությամբ տեսականի:

Փոքր խանութները, օբյեկտի փոքր տարողունակության և սառնարանային սահմանափակ ենթակառուցվածքի պատճառով, ունեն ավելի փոքր քանակությամբ ապրանքների պաշարներ: Սուպերմարկետների ցանցերն ու խոշոր մանրածախ վաճառողները ներկրում են իրենց սեփական ապրանքները և մեծ պաշարներ կուտակում իրենց պահեստներում: Որպես կանոն, առևտրականները չեն սպասում, որ ապրանքների պաշարները սպառվեն: Նրանք հաճախակի են լրացնում պաշարները (օրեկան, շաբաթական և այլն): Եթե պաշարները սահմանափակ են, ապա դա ոչ թե այն պատճառով, որ ապրանքը շուկայում ունի սահմանափակ հասանելիություն, այլ այն պատճառով, որ այդ ապրանքներն ունեն ավելի կարճ պիտանելիության ժամկետներ, առաքվում են փոքր քանակությամբ, բայց հաճախ, օրինակ, հացի համար՝ ամենօրյա, կաթնամթերքի համար՝ շաբաթական մի քանի անգամ, կամ այլ պարենային և ոչ պարենային ապրանքների համար՝ շաբաթական/ամսական:

Տեսականորեն, եթե ապրանքի պաշարները փոքր են, ապա պաշարները համալրելու հիմնական ժամանակը նույնպես պետք է փոքր լինի: Երբ մատակարարման շղթաները կայուն են, **հաճախակի մատակարարումներով փոքր պաշարները առևտրականներին ճկունության հնարավորություն են տալիս**՝ ժամանակին արձագանքել սպառողների պահանջարկի փոփոխություններին (Պարենի համաշխարհային ծրագիր, WFP 2020a): Այդպես է նաև Հայաստանում. առևտրականները փոքր պաշարներ ունեն և հաճախ ու փոքր քանակությամբ են ստանում ապրանքները, և երբ սպառողի պահանջարկը փոխվում է, առևտրականները կարողանում են արագ արձագանքել:

Այնուամենայնիվ, եթե մատակարարման շղթայում մեծ խափանումներ են տեղի ունենում, ապա ապրանքների փոքր պաշարներ ունեցող մանրածախ վաճառողները դառնում են խիստ խոցելի՝ արտադրանքի պակասուրդի պատճառով, քանի որ փոքր առևտրականները չեն ունենա բավարար պաշարներ՝ "ապահովության ռեզերվ" պահանջարկի անորոշությունների դեմ գործելու համար, նույնիսկ եթե խափանումները կարճաժամկետ լինեն (Պարենի համաշխարհային ծրագիր, WFP 2020):

Այսպիսով, որքան էլ հաճախակի մատակարարումներ ունեցող փոքր պաշարները առևտրականներին ճկունություն են տալիս արագ արձագանքել սպառողների պահանջարկի փոփոխություններին, այնքան էլ փոքր պաշարները առևտրականներին դարձնում են խոցելի մատակարարման շղթայի հնարավոր խափանումների հանդեպ՝ նրանց թողնելով առանց պահուստային պաշարների "պաշտպանական ցանցի", մինչև մատակարարումը վերականգնվի:

Զարգացած արևմտյան պետություններում COVID-19 համաճարակը ոչնչացրեց **տնտեսական հարաբերությունների վաղուց հիմնված ցանցը**, որը հավասարակշռում էր տնտեսության տարբեր մասնակիցներին՝ արտադրող, մատակարարող և սպառող: Օր.՝ սերմ արտադրող, հողագործ, բերք հավաքող, ռեստորանատեր, միս փաթեթավորող, խանութի սեփականատեր, սպառող, բիզնես ապահովագրող և այլն, և այլն: Մեկի գործը կախված էր մյուսից, և նրանք գործում էին միասին: Երբ պահանջարկը կանխատեսվում է, այդ հաստատված տնտեսական հարաբերությունները կայունություն են տալիս առևտրականներին, բայց նաև զրկում են նրանց ճկունությունից արագորեն հարմարվել սպառողական պահանջարկի հանկարծակի փոփոխություններին: COVID-19-ը փոխեց զարգացած տնտեսություններում շուկաների գործառնական դինամիկայի հավասարակշռությունը, ֆունկցիոնալությունը:

Հայաստանում շուկայի ֆունկցիոնալության հիմնական մարտահրավերներ COVID-19-ը ընթացքում չեն չդրսևորվել շուկայի տարբեր մասնակիցների միջև հենց այդ տնտեսական ուժեղ կապերի վաղուց և երկարատև հաստատված և ինստիտուցիոնալացված ցանցի բացակայության պատճառով (օր. սերմ արտադրողների, գյուղացիների, բերք հավաքողների, մատակարարների, սննդի վերամշակող ընկերությունների, բանկերի, ռիսկերի մոնիտորինգի և ապահովագրական ընկերությունների և այլնի միջև երկարատև **շղթայական համագործակցության անկայունության**, նույնիսկ բացակայության, պատճառով): Հայաստանի զարգացող տնտեսությունում այս տնտեսական հարաբերություններն ավելի անկայուն են, անհետևողական, ինքնաբուխ, ոչ-փոխկապակցված և դեռ գտնվում են կառուցվածքավորման փուլում: ***Այսպիսով, և՛ COVID-19-ի , և՛ Հայաստանի պարենի անվտանգության ընդհանուր մարտահրավերները ավելի շատ կապված են Հայաստանի տնտեսության և գյուղատնտեսության համակարգային ինստիտուցիոնալացման խնդիրների հետ, քան շուկայական գործառնական դինամիկայի և ֆունկցիոնալության հետ:***

Պարենի անվտանգությունն ավելին է, քան գյուղատնտեսությունը

Եթե պարենի անվտանգությունը ընկալվում է որպես գյուղատնտեսության ոլորտի մաս, ապա դա սահմանափակում է բոլոր հնարավորությունները, որ պարենի անվտանգությունը կարող է ստեղծել երկրի տնտեսության համար: Այս ձևակերպմամբ պարենի անվտանգության համար անհրաժեշտ ամեն ինչ կախված է գյուղատնտեսության ոլորտում հաջողություններից: Եվ պարենի անվտանգության զարգացումը նույնպես դառնում է սահմանափակ հասկացություն, քանի որ տեղական սպառումը սահմանափակ է և այնքան է, որքան տվյալ բնակչությունը կարող է սպառել:

Բայց պարենի անվտանգությունը կարող է շատ ավելի նպաստել տնտեսության զարգացմանը, քան պարզապես սահմանափակվել գյուղատնտեսությունով: Պարենի անվտանգությունը կարող է կապել տնտեսության տարբեր ճյուղեր, և իր զարգացման միջոցով կարող է նպաստել բոլոր ներգրավված և կապված կողմերի, տնտեսության ոլորտների և մասնագիտացված արդյունաբերությունների զարգացմանը: Օրինակ, այն կարող է կապել տուրիզմը և սպասարկման ոլորտը՝ սննդամթերքի որակի և անվտանգության խնդիրների հետ, տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության ոլորտը՝ գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի գնահատման, մոնիտորինգի և կանխարգելման համակարգերի բարելավման հետ, տրանսպորտային ոլորտը՝ մատակարարման շղթաների և արտահանման ընդլայնման հետ, ծանր արդյունաբերությունը և շինարարությունը՝ սննդի պահեստարանների և սառնարանային ու տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման հետ, սննդի վերամշակման արդյունաբերությունը՝ տրանսպորտային ոլորտի հետ և այլն, և այլն: Այն կարող է նպաստել ագրոպարենի մշակման և գյուղատնտեսության ու տրանսպորտային լոգիստիկայի զարգացմանը, մեքենաների նորոգման և ինժեներական ծառայությունների արդիականացմանը, ագրոտուրիզմին, գինեգործությանը, կոնյակի և մրգային

օղիների արտադրությանը, խորհրդատվությանը, սերտիֆիկացման ծառայություններին, լաբորատոր փորձարկումներին և այլն:

Այսպիսով, պարենի անվտանգությունը կարող է մուլտիպլիկատիվ ազդեցություն ունենալ տնտեսության զարգացման վրա: Պարենի անվտանգությունը կարող է աջակցել տնտեսության զարգացմանը: Պարենի անվտանգությունը կարող է լինել տնտեսական զարգացման այլընտրանքային մոդել, եթե դրա նպատակները չեն սահմանափակվում միայն գյուղատնտեսության մեջ:

Գրականության ցանկ

ԱՐՄՍՏԱՏ (ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտե), 2020, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. Մամուլի հաղորդագրություն, *Դեկտեմբերի 2, 2020.* Հասանալի է՝ Դեկտեմբերի 3, 2020 https://www.armstat.am/file/doc/99521023.pdf:

BBC News, 2020, "Կորոնավիրուս. Մսամթերքի պակասուրդը դնում է ԱՄՆ ֆերմերներին «ապշեշուցիչ» ընտրության առաջ", (անգլերեն), մայիսի 7, 2020: Հասանելի է՝ Դեկտեմբերի 5, 2020 https://www.bbc.com/news/world-us-canada-52575904:

CNN, 2020, "Ինչու՞ է դժվար կրկին գտնել թղթե սրբիչները", (անգլերեն), սեպտեմբերի 13, 2020, Հասանելի է՝ դեկտեմբերի 5, 2020 https://www.cnn.com/2020/09/13/business/paper-towel-shortage/index.html:

Economist Intelligence Unit, (2020), "Համաշխարհային պարենային անվտանգության ինդեքս. Վարկանիշներ և միտումներ", (անգլերեն): Հասանելի է՝ նոյեմբերի 29, 2020 https://foodsecurityindex.eiu.com/:

ՀՀ կառավարություն, 1998, *Հաստված «Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման քաղաքականության մասին» ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից: 1998 թ. Դեկտեմբերի 24, թիվ 63 որոշում:*

ՀՀ Կառավարություն, 2005, *Հաստված «Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման քաղաքականության մասին» ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից:* Հունվար 5, 2005. Որոշում No. 3 (ընդունվել է հունվարի 25-ին, 2005). Հայերենով հասանելի է՝ Սեպտ. 20, 2020 http://www.irtek.am/views/act.aspx?aid=31807:

ՀՀ Կառավարություն, 2011, «*Հայաստանի Հանրապետության Պարենային Անվտանգության Ապահովման Հայեցակարգից Բխող Միջոցառումների Ծրագիր Հաստատելու Մասին» ՀՀ Կառավարության թիվ 1522-Ն որոշում, ընդունված հոկտեմբերի 13, 2011. Հայերենով հասանելի է Սեպտ.* 20, 2020https://www.arlis.am/documentview.aspx?docid=71868:

ՀՀ Կառավարություն, 2020բ, ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն. Հասանելի է՝ Հոկտ. 2, 2020 https://www.mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, 2020, " Պարենի անվտանգություն", հասանելի է՝ Նոյեմբերի 22, 2020 https://www.mineconomy.am/page/1333:

ՀՀ Ազգային ժողով, 2002, "Պարենային Անվտանգության Ապահովման Մասին ՀՀ օրենք": Ընդունված մայիսի 7, 2002: Հասանելի է՝ Սեպտեմբերի 28, 2020. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1312&lang=arm:

ՀՀ Ազգային Ժողով, 2004, «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եվ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենք ընդունված մարտի 16, 2004, no. ՀՕ-53-Ն, ուժի մեջ էր մինչև ապրիլի 15, 2004:

Պարենի համաշխարհային ծրագիր (World Food Programme), 2019, «Համապարփակ պարենային անվտանգության, խոցելիության վերլուծություն (CFSVA)» Պարենային անվտանգության և խոցելիության եռամյակային տեղեկագրում: Երեւան, Հայաստան:

Պարենի համաշխարհային ծրագիր (World Food Programme), 2020, "Շուկայի ֆունկցիոնալության ինդեքս. Տեխնիկական ուղեցույց", Հռոմ, Իտալիա: